
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱԶՄԱՆ ՀԱՐՅՈՒ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎՃՌԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ (1919-1920 թթ.)

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

1918 թ. հոկտեմբերի 30-ին հնչեց Օսմանյան կայսրության վերջին զանգը: Առաջին համաշխարհային պատերազմում ռազմական պարտություն կրած կայսրության ներկայացուցիչները՝ Հուսեյն Ռաուֆը, Հիքմեթը և Սաադուլլան, հունական Լեմնոս կղզու Մուդրոս նավահանգստային քաղաքում՝ բրիտանական «Ազամեմ-նոն» ռազմանավի վրա, հրադադարի պայմանագիր ստորագրեցին հաղթանակած Անտանտի հետ. վերջինիս անունից այն ստորագրեց բրիտանական ծովակալ Կալտրոպը:

Դադարեց գոյություն ունենալուց և պատմության արխիվ հանձնվեց մի կայսրություն, որը միջին դարերում և նոր շրջանում՝ մոտ յոթ հարյուր տարի, ճակատագրականորեն բացասական դեր է խաղացել մարդկության պատմության մեջ: Մեր կարծիքով, Օսմանյան կայսրության բնութագիրը, թերևս, ամենադիպուկը տվել են մոտ 400 տարի թուրքական լծի տակ տառապած արաբները, որոնք այն անվանել են «գուլումի երկիր»¹: Ուշագրավ է, որ այդ սահմանումը պատկանում է մուսուլման արաբներին, և դա բնավ զարմանալի չէ, որովհետև օսմանյան մտադարը հավասարապես իր պտույտի մեջ էր վերցրել կայսրության բոլոր ոչ թուրք ժողովուրդներին՝ ինչպես քրիստոնյա՝ ասորիներ, բուլղարներ, հայեր, հույներ, սերբեր և բալկանյան այլ ժողովուրդներ, այնպես էլ մուսուլման՝ ալբանացիներ, արաբներ, քրդեր և այլն: Նրանք բոլորը կայսրության՝ բռնի թուրքացման պաշտոնական քաղաքականության զոհերն էին:

Բարբարոսական այդ կայսրության, որը հայտնի էր նաև «Աբդուլ Համիդ II-ի բանտ»² հորջորջումով, պարտությունը և վերացումը գոհունակությամբ ընդունեցին օսմանյան տաժանակիր լծի տակ տառապող բոլոր ժողովուրդները, եվրոպական երկրների և աշխարհի առաջադեմ քաղաքական, ազգային ու մշակութային գործիչները: Դա նրանց կողմից ընկալվում էր աշխարհի մի անձայրածիր տարածքում՝ Բալկաններում, Փոքր Ասիայում, Արաբական Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում հետադիմության և բռնակալության մարմնավորումը և խորհրդանիշը հանդիսացող օսմանյան աշխարհակալության վերացում և նրան ենթակա տարբեր էթնիկական խմբերի, լեզուների ու կրոնների պատկանող ժողովուրդների ա-

¹ Ֆ ու ա դ շ ա ս ան շ ա ֆ ի գ. Հայ ժողովրդի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Կահիրե, 1986, էջ 201 (արաբերեն), Մ ր վ ա ն ա լ - Մ ու դ ա վ ա ր. Հայերը պատմության ընթացքում, Բեյրութ, 1982, էջ 395, 401 (արաբերեն) և այլն:

² Յ ու ս ու ֆ Ի բ ր ա հ ի մ Յ ա գ բ ե կ. Մայիսի մեկը աշխարհում և Լիբանանում, Բեյրութ, էջ 48 (արաբերեն):

զատագրում, ինչը նրանց առջև պիտի բացեր զարգացման և առաջադիմության մեծ հեռանկարներ:

Օսմանյան կայսրության պարտությունն այլ կերպ ընկալվեց բուն Թուրքիայում՝ թուրքերի կողմից: Դա նրանց համար սև օր էր, իսկական ազգային աղետ, մանավանդ այն բանից հետո, երբ ռազմական պարտությունը վերածվեց քաղաքական պարտության, այսինքն՝ Օսմանյան կայսրությունը դադարեց գոյություն ունենալուց, և Թուրքիան դարձավ սովորական մի պետություն, որպիսիները շատ-շատ էին աշխարհի քաղաքական քարտեզի վրա: Թուրք ժողովուրդն իր տարբեր խավերով, պետական և քաղաքական գործիչները, զինվորականները, մուսուլմանական հոգևորականությունը ցնցված էին: Եթե դա լիներ սոսկ ռազմական պարտություն, դեռ ոչինչ, առաջին անգամը չէր, որ թուրքերը պարտություն էին կրում մարտադաշտերում, կարելի էր մտածել ռևանշի մասին: Այժմ այդ հնարավորությունը չկար, քանի որ մոլորակի վրայից անհետացավ «Օսմանյան կայսրություն» պիտակի տակ դարեր շարունակ գործած պետական կազմավորումը: Նրանք դա համարում էին ազգային խայտառակություն և ստորացում: Թուրքերը, որոնք իրենք էին եղել նվաճողներ և հանդես եկել ուրիշ ժողովուրդներին ստրկացնողների դերում, եղել էին տիրապետող ժողովուրդ և թուրքավարի լուծել այլոց ճակատագիրը, այժմ իրենք և իրենց երկիրը՝ այն ինչ մնացել էր կայսրության փլուզումից հետո, միանգամից հայտնվեցին ենթակա երկրի ու կախյալ ժողովրդի կարգավիճակում: Դարերի ընթացքում ձևավորված թուրքական մտածելակերպը և հոգեբանությունը, որոնք խարսխված էին թուրքի գերակայության, բացառիկության ու առավելության սկզբունքների վրա, իրենց թույլ չէր տալիս հաշտվել նոր կարգավիճակի հետ՝ վստալական կախման մեջ գտնվել Անտանտի երկրներից՝ առաջին հերթին Անգլիայից և Ֆրանսիայից: Այդ պատճառով էլ ազգային արժանապատվության ստորացման զգացմունքի հետ միասին, նրանց մեջ խոսում էր նաև հուսահատությունը՝ մի կողմից, և ցասումը՝ մյուս կողմից:

Այդ զգացմունքները, թուրքերի մոտ աստիճանաբար բյուրեղանալով, կերպարանափոխվեցին «Ո՞վ է մեղավոր» և «Ո՞վ պետք է պատասխան տա» հարցերի: Այդ հարցադրումների մեջ արտահայտվում էր ոչ միայն թուրքերի հետ պատահած ազգային աղետի պատճառների բացահայտման և մեղավորների հայտնաբերման ցանկությունը, այլև՝ վրիժառության զգացումը, որը մշտապես այնքան ուժեղ և դաժան է եղել թուրքերի մեջ: Բայց այս անգամ վրիժառության զգացումի յուրահատկությունն այն էր, որ դա ուղղված էր առաջին հերթին ոչ թե օտարի, այլ իր երեկվա սեփական ղեկավարության՝ «Իթթիհադ վե թերակկի»՝ («Միություն և առաջադիմություն») երիտթուրքական կուսակցության առաջնորդների և նույն երիտթուրքական կառավարության դեմ:

Մեղավորների և պատասխանատուների բացահայտման պահանջը խթանվում էր նաև միջազգային հանրության, պետական և քաղաքական ու մշակութային առանձին գործիչների պահանջներով և ճնշումով: Մակայն այդ վերջինի վեկտորն այլ ուղղվածություն ուներ. պահանջի հիմնական բովանդակությունն էր բացա-

հայտել և պատժել Օսմանյան կայսրությունում 1915 թվականից կիրառված Հայոց Մեծ եղեռնի հանցագործներին:

Ահա այսպիսի իրադրության պայմաններում Ահմեդ Թևֆիկ փաշայի կազմած թուրքական նոր կառավարությունը 1918 թ. նոյեմբերին որոշում ընդունեց դատական պատասխանատվության ենթարկել և պատժել երիտթուրքական «Էթթիհադ վե թերակկի» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամներին, երիտթուրքական պառլամենտի և կառավարության ղեկավարներին, ինչպես նաև Օսմանյան կայսրության իսլամական հոգևոր պետերին՝ ի դեմս շեյխ ուլ-իսլամի: Այդ կառավարությունն առաջինն էր, որ կազմավորվեց երիտթուրքերի տապալումից և նրա առաջնորդների՝ Թուրքիայից փախուստ տալուց հետո: Դա նաև առաջին կառավարությունն էր, որի կազմում տեղ չգտավ երիտթուրքական ոչ մի գործիչ:

Այնուամենայնիվ, հարց է ծագում, թե ինչու Ահմեդ Թևֆիկ փաշայի ու նրան հաջորդած Դամադ Ֆերիդ փաշայի և թուրքական մյուս կառավարությունները դիմեցին այդ քայլին՝ որոշեցին դատական գործ հարուցել ու պատժել Օսմանյան կայսրության նախկին պետական, կուսակցական և հոգևոր առաջնորդներին:

Պատմագիտական գրականության մեջ սովորաբար նշվում է երկու պատճառ: Առաջինը՝ բողոքի և դժգոհության ուժեղ ալիքը, որ այդ ժամանակ բարձրացել էր երկրի ներսում և դրանից դուրս, որի ճնշման տակ թուրքական նոր կառավարությունը ստիպված էր նահանջել, և երկրորդ՝ երիտթուրքական ոճրագործ վարչակարգից սահմանազատվելու ձգտումը³: Ընդհանուր առմամբ այդ երկու պատճառներն առկա են և համապատասխանում են ճշմարտությանը, թեև հարկ է նշել, որ դրանք համարժեք չեն: Մեր կարծիքով, զգալիորեն չափազանցված է բողոքի ալիքի և համընդհանուր դժգոհության գործոնի դերը: Մյուս կողմից՝ անտեսված է երրորդ գործոնը: Այդ ժամանակ խոսքը ոչ այնքան և ոչ միայն երիտթուրքական հանցագործ վարչակարգից սահմանազատվելու մասին էր, որքան Թուրքիայի նոր քաղաքական կերպար՝ իմիջ, ստեղծելու կամ, ինչպես անգլիացիներն են ասում, «to save the face» (դեմքը փրկելու) մասին: Թուրքիայի, այսպես կոչված, նոր լիդերները, որոնք իրականում դուրս էին եկել միննույն սուլթանական շինելից, փորձում էին տպավորություն ստեղծել, թե Թուրքիան երեկվա Օսմանյան կայսրությունը ու նրա իրավահաջորդը չէ և ընդհանուր ոչ մի բան չունի նախորդ վարչակարգի ոճրագործությունների հետ, այլ մի նոր երկիր է՝ իր սեփական քաղաքական դիմապատկերով: Դրանով նրանք հույսեր էին փայփայում մեղմացնել հաղթանակած Անտանտի երկրների կողմից Թուրքիային սպասվող հարվածները և պատիժները: Նրանց արդեն հայտնի էր, որ դաշնակիցները պատրաստվում էին մոտակա ժամանակներում Փարիզում հրավիրել միջազգային համաժողով, որտեղ պարտություն կրած գերմանական բլոկի երկրների, այդ թվում և Թուրքիայի հետ պետք է կնքվեին հաշտության պայմանագրեր: Հիշեցնենք, որ Փարիզի խաղաղության կոնֆերանսը բացվեց 1919 թ. հունվարի 18-ին: Այդ պատճառով թուրքական նոր ղեկավարները շտապում էին ձեռնարկել այնպիսի քայլեր, որոնք, ինչպես իրենք

³ Այդ մասին տես՝ Ա. Փ ա փ ա զ յ ա ն. Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, Լոս Անջելես, 2005, էջ 22:

էին կարծում, պետք է նպաստեին Թուրքիայի հետ կնքվելիք հաշտության պայմանների մեղմացմանը: Դրանով է բացատրվում նաև այն հանգամանքը, որ թուրքական նոր կառավարությունը, որը գլխավորեց Ահմեդ Թեֆիկ փաշան, այդպես արագորեն՝ կարելի է ասել հապշտապ, որոշում ընդունեց դատավարություն սկսել նախկինների դեմ: Օսմանյան կայսրությունը Անտանտի հետ հրադադարի պայմանագիրը կնքեց 1918 թ. հոկտեմբերի 30-ին, իսկ մի քանի օր անց՝ նոյեմբեր ամսին, արդեն կար նոր կառավարության որոշումը՝ երիտթուրքական ղեկավարությանը դատի տալու և պատժելու վերաբերյալ:

Կարծում ենք, որ երբ խոսվում է այն մասին, թե ինչու թուրքական նոր լիդերները դատական հետապնդում սկսեցին երիտթուրքական հանցախմբի դեմ, պետք է հաշվի առնել այդ երեք գործոնները միասին:

Բնականաբար, հարց է ծագում. իսկ ո՞րն էր դատավարության մոտիվավորումը կամ ի՞նչ հանցանքների մեջ էր մեղադրվում երիտթուրքական ղեկավարությունը, որի ձեռքում էր մոտ 10 տարի կենտրոնացված եղել ամբողջ իշխանությունն Օսմանյան կայսրությունում:

Ինչպես ի հայտ եկավ դատավարության ժամանակ (որը և գրանցված է նրա արձանագրություններում), երիտթուրքական ղեկավարությունը մեղադրվում էր երկու գլխավոր հանցանքների մեջ: Առաջին՝ երիտթուրքական տրիումվիրատը՝ Թայյաթը, Էնվերը, Ջեմալը և նրանց զինակից ու համախոհ մյուս ղեկավարները, մեղադրվում էին կայսրությունը Առաջին համաշխարհային պատերազմի մեջ ներգրավելու և այն բանի համար, որ նրանք այդ քայլին էին դիմել առանց Օսմանյան կայսրության բարձրագույն օրենսդիր մարմինը հանդիսացող մեջլիսի՝ պառլամենտի, գիտության ու համաձայնության, ինչպես որ դա պահանջվում էր թուրքական սահմանադրությամբ: Երկրորդ՝ հայերի դեմ կիրառած հանցանքների և ոճրագործությունների՝ նրանց տեղահանման, բռնությունների ու զանգվածային սպանությունների կազմակերպման մեջ: Երկու մեղադրանքներն էլ ծանրակշիռ էին:

Երիտթուրքերի դատավարությունն անցել է երեք փուլով:

Առաջին փուլում՝ 1918 թ. դեկտեմբերի 16-ին, ստեղծվեցին հարցաքննիչ հանձնաժողովներ, կայսրությունը բաժանվեց 10 դատաքննչական գոտիների, և յուրաքանչյուր գոտու կամ շրջանի համար նշանակվեցին պետական մեղադրողներ՝ դատախազներ, ու դատավորներ: Հարցաքննիչ հանձնաժողովների գլխավոր խնդիրն էր հավաքել հանցանշաններ, մեղադրական ապացույցներ և վկայություններ, որոնք պետք է վերաբերեին հայկական ջարդերին, դրանց կազմակերպիչներին՝ ինչպես անձերին, այնպես էլ կազմակերպություններին, այդ թվում և երիտթուրքական կուսակցությանը, ոստիկանությանը, բանակին և, հատկապես՝ «Հատուկ կազմակերպությանը» («Թեշքիլաթ-ը մահսուսեին»): Նրանք կատարում են մեծ ծավալի աշխատանք, հավաքում և ուսումնասիրում պաշտոնական զանազան փաստաթղթեր, հեռագրեր, ծածկագրեր, նամակներ, գրություններ, հրահանգներ ու հրամաններ: Մեծ ուշադրություն է դարձվել ականատեսների վկայությունների հավաքմանը և դասակարգմանը: Այդ աշխատատար գործի ժամանակ հարցաքն-

նիչ հանձնաժողովներին հայտնի է դառնում, որ երիտթուրքական «Իթթիհադ վե թերակկի» կառավարող կուսակցության և նրա կենտրոնական կոմիտեի, ինչպես նաև «Հատուկ կազմակերպության» կողմից զգալի թվով փաստաթղթեր ոչնչացվել են, որը կատարվել էր երիտթուրքական կուսակցության ղեկավարներից մեկի, նրա գլխավոր գաղափարախոսը համարվող Նազիմի կարգադրությամբ: Նա անձամբ փախցրել էր կուսակցության արխիվը՝ ցանկանալով այդ ուղիով հանրությունից թաքցնել և իրենց ոճրագործությունները: Այդուհանդերձ, զգալի բան պահպանվել էր, որը հիմք հանդիսացավ երիտթուրքերի ղեկավարների նկատմամբ հիմնավորված դատավճիռ կայացնելու համար:

Երկրորդ փուլը թուրքական փառիշահի՝ սուլթան Մեհմեդ VI Վահիդէդդինի (1918–1922) երեք հրամաններն են հանցագործներին դատելու համար ռազմական արտակարգ ատյաններ ստեղծելու մասին: «Նորին մեծություն փառիշահի 1335 թ. (1919 թ.) մարտի 8-ի կայսերական հրամանով» կազմվում են առաջին, երկրորդ և երրորդ ռազմական արտակարգ ատյանները՝ դատարանները: Սուլթանի հրամանով առաջին ռազմական արտակարգ ատյանում տեղի է ունենում երիտթուրքական կառավարության ղեկավարների և «Իթթիհադ վե թերակկի» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամների դատավարությունը, որը սկսվում է 1919 թ. ապրիլի 28-ին Կոստանդնուպոլսում և ավարտվում 1919 թ. հունիսի 26-ին, իսկ դատավճիռն արձակվում է հուլիսի 5-ին: Երկրորդ ռազմական արտակարգ ատյանի առջև կանգնեցին «Իթթիհադ վե թերակկի» կուսակցության շրջանային պատասխանատու քարտուղարները և պաշտոնյաները: Բսկ երրորդ ռազմական արտակարգ ատյանում 1919–1920 թթ. տեղի ունեցավ Յոզղաթի, Տրապիզոնի, Բոյուք Դերեի և Խարբերդի տեղահանության ու կոտորածների կազմակերպիչների և կատարողների դատավարությունը:

Երրորդ փուլն ընդգրկում է բուն դատավարությունը և երեք ռազմական արտակարգ ատյանների արձակած դատավճիռները:

Սուլթանի հրամանով հաստատվում է երեք ռազմական արտակարգ ատյանների կազմը. նախագահ է նշանակվում գեներալ-լեյտենանտ Մուսթաֆա Նազմ փաշան, անդամների մեջ էր նաև Թուրքիայի գլխավոր դատախազ Մուսթաֆա Նազմի բեյը: Բոլոր մեղադրյալներն ապահովվել էին դատապաշտպաններով:

Դատավարությունն իր բոլոր երեք փուլերում նախապատրաստվել և ընթացել է միջազգային իրավական բոլոր նորմերի խստիվ պահպանմամբ, լեզիտիմ սուլթանի հրամանների հիման վրա ու գործող սահմանադրության դրույթներին և պահանջներին համապատասխան: Խստիվ պահպանվել է նաև դատավարության ընթացակարգը: Հետևաբար, այդ ատյանների արձակած վճիռներն օրինական են, կասկած չեն հարուցում և ենթակա չեն բեկանման:

Երիտթուրքերի դատավարությունը որոշ իմաստով կարելի է անվանել «անհայտ դատավարություն»: Դրա նյութերը երկար ժամանակ գործնականում մատչելի չեն եղել ոչ միայն հասարակայնությանը, այլև մասնագետներին՝ այդ թվում և հայ թուրքագետներին, հայագետներին ու այլն: Դատավարության մասին լսել էին, ոմանք անգամ ունեին կցկտուր տեղեկություններ, սակայն նյութերն ամբողջությամբ

յամբ՝ մասնավորապես դատավարության և դրա նիստերի արձանագրությունները, կրկնում ենք, հրապարակի վրա չկային, և հնարավոր չէր դրանց հետ ծանոթանալ:

Ո՞րն էր պատճառը: Պատասխանը պետք է փնտրել թուրքական իշխանությունների քաղաքականության մեջ, որոնք բնավ շահագրգռված չէին, որ դատավարության նյութերը լայնորեն տարածվեին և հայտնի դառնային միջազգային հանրությանն ու մասնագետներին: Այդ պատճառով էլ դրանք չեն հրապարակվել առանձին գրքով, այլ փոքր տպաքանակով 1919–1920 թթ. գետեղվել են «Թաքվիւմ-ի վեքայի» («Երադարձությունների օրացույց») թուրքական թերթի էջերում՝ այն էլ նրա արարատառ հավելվածում: Նախ՝ թերթի փոքր տպաքանակը, սպա նաև արարատառ օսմաներենի լեզվական դժվարությունները հանգամանքներ են, որոնք ոչ միայն չեն նպաստել այդ նյութերի տարածմանը, այլ, ընդհակառակը, լուրջ խոչընդոտ են հանդիսացել: Հարկ է ընդգծել նաև, որ, ինչպես նշում է Ա. Փափազյանը, շրջաններին և զավառներին վերաբերող դատավարությունների արձանագրությունները կանոնավոր չեն հրատարակվել թուրքական մամուլում: Այնուհետև նա ավելացնում է. «Թաքվիւմ-ի վեքայի»-ում ամբողջապես տպագրվել են միայն դատավճիռները⁴: Չպետք է բացառել նաև, որ դրանց հրատարակումից հետո թերթի այդ համարներն ընդհանրապես անհետացել են հրապարակից:

Սակայն հայտնի է, որ եղել են երիտթուրքերի դատավարության առանձին հատվածների թարգմանություններ, օրինակ՝ ֆրանսերեն: Վերոնշյալ թուրքական թերթից դրանք ֆրանսերեն է թարգմանել և 1975 թ. հրատարակել Ժան-Մարի Կարզուն: Այդ նյութերից օգտվել է Մ. Ներսիսյանը և ռուսերեն թարգմանությամբ գետեղել իր կազմած «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» ժողովածուի երկրորդ հրատարակության մեջ⁵:

Երիտթուրքերի դատավարության նյութերին ու արձանագրություններին հնարավոր եղավ ծանոթանալ և հայերեն թարգմանությամբ ամբողջապես ներկայացնել, երբ ֆրանսահայ հասարակական հայտնի գործիչ, բարերար և Հայաստանի նվիրյալ Կարպիս Ջրբաշյանը, մեծ դժվարություններով, կարելի է ասել հրաշքով, ձեռք բերեց «Թաքվիւմ-ի վեքայի» ամբողջական հավաքածուն և հաղթահարելով զանազան խոչընդոտներ, Փարիզից բերեց Մայր Հայրենիք՝ ի պահ տալով Խորհրդային Հայաստանի արխիվային վարչությանը:

Հայաստանի գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի տնօրինության հանձնարարությամբ, ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու Ավետիս Փափազյանը ձեռնամուխ եղավ դատավարության նյութերի ամբողջական թարգմանությանը և հրատարակության պատրաստմանը: Նա, լինելով արարատառ թուրքերենի փայլուն գիտակ, կարողացավ մեծ հաջողությամբ այդ գործը հասցնել ավարտին, որը Արևելագիտության ինստիտուտը հրատարակեց 1988 թ.: Իսկ 2005 թ. Լոս Անջելեսում լույս տեսավ այդ

⁴ Նույն տեղում, էջ 259:

⁵ Геноцид армян в Османской империи. Под редакцией М. Г. Нерсисяна. Второе, дополненное издание. Ереван, 1982, с. 557-574.

գրքի երկրորդ հրատարակությունը՝ մեր առաջաբանով՝ «Պատմական նշանակություն ունեցող դատավարություն, որի վճիռներն անբեկանելի են» խորագրի ներքո:

Եվ մենք, անդրադառնալով մեզ հուզող հարցին, օգտվել ենք վերջին հրատարակությունից, որը, ինչպես նշվեց, պարունակում է երիտթուրքերի դատավարության ամբողջական տեքստերը՝ նիստերի արձանագրություններով հանդերձ: Դրանց մեջ ամենակարևորը, անշուշտ, երիտթուրքական կառավարության և երիտթուրքական «Իթթիհադ վե թերակկի» կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամների դատավարության նյութերն են: Ռազմական արտակարգ ատյանի առջև կանգնեց երիտթուրքական ողջ բարձրագույն ղեկավարությունը: Սակայն բոլորը չէ, որ ներկա էին: Նրանցից ներքին գործերի նախարար և 1916–1918 թթ. Օսմանյան կայսրության մեծ վեզիր՝ վարչապետ Թալլաթը, ռազմական նախարար Էնվերը, ռազմածովային նախարար Ջեմալը, երիտթուրքական կուսակցության կենտրոնի անդամ և «Հատուկ կազմակերպության» նախագահ Բեհաէդդին Շաքիրը, հանրակրթական նախարար ու կենտկոմի անդամ դոկտոր Նազհիմը և այլք՝ թվով 11 բարձրաստիճան պաշտոնյա, դատվեցին հեռակա կարգով, որովհետև նրանք հասցրել էին նախքան պատերազմի ավարտը և 1918 թ. հոկտեմբերի 30-ին ստորագրված Մուդրոսի զինադադարը փախչել ու ապաստան գտնել Գերմանիայում և այլ երկրներում: Դատարանի առջև կանգնեցին կայսրության 20 ղեկավարներ, այդ թվում կայսրության մեծ վեզիրի պաշտոնը 1913–1916 թթ. գրաված Սայիդ Հալիմ փաշան, «Իթթիհադ վե թերակկի» երիտթուրքական կուսակցության գլխավոր քարտուղար Միդհատ Շուքրի բեյը, թուրքական պառլամենտի՝ մեջլիսի նախագահ Իբրահիմ բեյը, սենատի նախագահ Ռիֆաթ բեյը, տարբեր ժամանակներում կայսրության բարձրագույն կրոնական ղեկավարի՝ շեյխ ուլ-իսլամի պաշտոնը զբաղեցրած Մեհմեդ Էսադը, Հայրին և Մուսա Քյազիմը, արդարադատության նախարար Խալիլ էֆենդին, արտաքին գործերի նախարար Ահմեդ Նեսիմին, ներքին գործերի նախարար Իսմայիլ Ջանփոլադը, հասարակական աշխատանքների, պարենավորման, փոստի և հեռագրատան նախարարները, «Իթթիհադ վե թերակկի» կուսակցության կենտկոմի ու «Հատուկ կազմակերպության» այլ անդամներ:

Դատավարության ընթացքում ևս 77 հանցագործ, անգլիացիների օգնությամբ, բանտից արտոբվեցին Մալթա կղզի, որը գտնվում էր Անգլիայի տիրապետության ներքո: Այդ և մյուս երկու ատյաններում մեղադրյալների հարցաքննության, զանազան ծածկագիր նյութերի, հեռագրերի, պաշտոնական փաստաթղթերի քննության հիման վրա թուրքական դատարանն ընդունեց համապատասխան որոշում: Այդ որոշումն այն աստիճանի կարևոր է և պարզ, որ անգամ մեկնաբանության կարիք չի զգում, ուստի մենք նպատակահարմար ենք գտնում կատարել մեծ մեջբերումներ, որոնք ընթերցողին հնարավորություն կտան ինքնուրույն եզրակացություններ կատարելու և պատկերացում կազմելու, թե ովքեր և ինչու են կազմակերպել հայոց ցեղասպանությունը: «Իթթիհադ վե թերակկի» կուսակցության կենտրոնական կոմիտեի և Մեջլիսի գլխավոր խորհրդի փախուստի մեջ գտնվող անդամներից, – ասված է դատական եզրակացության մեջ, – նախկին մեծ վեզիր Թալլաթ փա-

շան, զինվորական շարքերից վտարված նախկին ռազմական նախարար Էնվեր էֆենդին, նախկին ծովային նախարար Ջեմալ էֆենդին, հանրակրթական նախկին նախարար դոկտոր Նազիմ բեյը, դոկտոր Բեհաեդդին Շաքիր բեյը, դոկտոր Ռուզուհի բեյը և նախկին հասարակական անվտանգության տեսուչ Ազիզ բեյը մեղադրվում են երկիրը պատերազմի մեջ ներքաշելու, «Թեշքիլաթ-ը մահսուսեի» հետ սերտ առնչություն ունենալու և այլ հանցագործություններ կատարելու համար⁶: Այնուհետև նշվում է. «Անցած 1330 (1914) թվականի հուլիսին, կուսակցության ազդեցիկ ղեկավարների, այդ թվում՝ ներկայումս զինվորական շարքերից վտարված, փախուստի մեջ գտնվող Էնվերի, Ջեմալի, Թայյաթի և մյուս գործընկերների մասնակցությամբ տեղի ունեցած խորհրդակցությունից անմիջապես հետո, երբ պատերազմ հայտարարվեց, նրանք ձգտեցին օգտագործել այն առիթը, որ Եվրոպան զբաղված է համաշխարհային պատերազմով և աշխատեցին ահաբեկությամբ, բռնի ուժով լուծել այնպիսի հարցեր, որոնք կարելի էր հարթել հանդարտորեն, արդար և առողջ բանականությամբ⁷: Մեղադրական եզրակացության մեջ նշվում էր, որ պետական պաշտոնյաները, «Իթթիհադ վե թերակկի» կուսակցության կոմիտեների ներկայացուցիչները, «Թեշքիլաթ-ը մահսուսեի» գործակալները «Առանց ազգի և հավատքի խտրականության սկսեցին ժողովրդին կոտորել, կոդպատել, ունեցվածքը այրել և շատերին տանջամահ անել: Չնայած որ ահաբեկման սլաքը հիմնականում ուղղված էր հայերի դեմ, այդուհանդերձ, տուժեցին նաև այլ տարրեր⁸: «Այլ տարրեր» ասելով, թուրքական դատարանը նկատի ուներ հույներին և ասորիներին:

Շատ կարևոր, սկզբունքային նշանակություն ունեցող հանրագումար է դատական եզրակացության հետևյալ հատվածը. «Ներկա հետաքննության գլխավոր հարցն այն է, որ հայերի տեղահանության ընթացքում, տարբեր ժամանակներում և զանազան վայրերում տեղի ունեցած հանցագործությունները և հատկապես յուրաքանչյուր հանցագործության նկատմամբ օրենքի հիման վրա կատարված քննությունները ցույց են տալիս, որ դրանք ոչ թե սահմանափակ կամ տեղական բնույթ են ունեցել, այլ կանխամտածված իրականացվել են վերոհիշյալ անձերից բաղկացած և միասնական ուժ հանդիսացող «Հատուկ կենտրոնի» բանավոր հրահանգերով և գաղտնի հրամաններով⁹: Այդ հարցը՝ հայերի տեղահանումը և կոտորածները, նրանց տանջամահ անելը, նախօրոք ծրագրավորված պետական քաղաքականության արդյունք լինելն այնքան է կարևորվել դատավարության ժամանակ, որ այդ միանգամայն հիմնավորված տեսակետը դատական եզրակացության մեջ մեկ անգամ չէ, որ հաստատվում է նաև այլ օրինակներով: Այդ հարցի կարևոր լինելը մեզ ստիպում է կատարել ուրիշ մեջբերումներ թուրքական դատարանի եզրակացությունից: Ներքին գործերի նախարարության հատուկ գրասենյակի պետ Բիսան բեյն իր ցուցմունքներում հաստատել է, որ «երբ ինքը գտնվելիս է եղել Քի-

⁶ Ա. Փ ա փ ա զ յ ա ն, նշվ. աշխ., էջ 52:

⁷ Նույն տեղում, էջ 55-56:

⁸ Նույն տեղում, էջ 57:

⁹ Նույն տեղում:

լիսի կայմակամի պաշտոնում, Ստամբուլից Հալեպ գործուղված Աբդուլահաս Նուրի բեյը հայտարարել է, որ «տեղահանման հիմնական նպատակը նրանց (հայերի – Ն. Հ.) ոչնչացումն է» և ավելացրել է նաև, որ ինքը կապի մեջ գտնվելով Թալաթ բեյի հետ, նրանից ուղղակի ստացել է կոտորածի հրաման, որ նա (Թալաթը) ձգտել է համոզել իրեն, որ դա է երկրի փրկությունը»¹⁰: Եզրակացության մեջ այլ փաստերի կողքին նշվում է նաև հետևյալ ուշագրավ ու արժեքավոր վկայությունը. «Չանկրիի մահմեդականները շրջակա վայրերում տեղի ունեցած դեպքերին (հայերի կոտորածներին – Ն. Հ.) վերաբերվել են ասելությամբ: Նույնիսկ մի օր, մի խումբ մեծամեծներ և ավագանիներ իրենց մուֆթիի հետ դիմել են քաղաքագլուխ Ռեշիտ փաշային հետևյալ խոսքերով. «Շրջակա վիլայեթներից հայերին իրենց երեխաներով միասին մորթվող անասունների նման քշում են դեպի լեռները և այնտեղ կոտորում: Մենք չենք ուզում, որ մեր վիլայեթում այդպիսի բան կատարվի: Մենք վախենում ենք Աստծո ցասումից: Պետությունը ոչ թե դաժանությամբ է կառավարում, այլ բանականությամբ: Խնդրում ենք, որ մեր վիլայեթում այդպիսի կոտորած տեղի չունենա»¹¹:

Եվ, վերջապես, միանգամայն հիմնավոր է դատավճռի ամփոփիչ եզրակացությունը, որտեղ սևով սպիտակի վրա գրված է. «Լիովին ապացուցված է, որ այդ կոտորածները տեղի էին ունենում Թալաթ, Էնվեր և Ջեմալ բեյերի անմիջական հրամաններով և գիտությամբ»¹²:

Թուրքական դատարանը մահվան դատապարտեց Թալաթին, Էնվերին, Ջեմալին, Նազիմին, Բեհաեդդին Շաքիրին: Մահվան դատապարտվեցին նաև Տրապիզոնի վալի Ջեմալ Ազմին և այդ շրջանի երիտթուրքական կոմիտեի ղեկավար Նայիլ բեյը, որոնց հրամանով «հայերին Սև ծովի ափերին նավ նստեցնելով խեղդամահ են արել»¹³: Հանցագործներից շատ-շատերը դատարանի կողմից դատապարտվեցին տարբեր ժամկետներով բանտարկության, իսկ ոմանք էլ ազատ արձակվեցին հանցակազմի բացակայության պատճառով:

Գլխավոր դատախազ Մուսթաֆա Նազմին, հանդես գալով դատավարության ավարտական նիստում, հայտարարեց. «Հարցաքննության ընթացքում ճշմարտությունը բացահայտվել է ամբողջապես... Կոտորածների և չարաշահումների հետևանքով օսմանցիների արժանապատվության վրա ընկած արյունոտ հետքերը, օսմանցիների ճակատը մրոտած սև բծերը կարելի է ջնջել միայն արդարության գրչով»¹⁴: Արդարացի խոսքեր, որոնց հետագայում դավաճանեցին Թուրքիայի մեկը մյուսին հաջորդած բոլոր կառավարությունները:

Այսպիսով՝ Թուրքիայի օրինական, լեգիտիմ սուլթանի՝ պետության ղեկավարի, հրամանով ստեղծված օրինական դատարանի՝ օսմանյան օրենքներին, գործող սահմանադրության դրույթներին և միջազգային իրավական բոլոր նորմերին

¹⁰ Նույն տեղում, էջ 60:

¹¹ Նույն տեղում, էջ 61:

¹² Նույն տեղում, էջ 63:

¹³ Նույն տեղում, էջ 65:

¹⁴ Նույն տեղում, էջ 73,75:

ու չափանիշներին համապատասխան արձակած դատավճիռը, որով մահվան դատապարտվեցին 1915 թ. Հայոց ցեղասպանության գլխավոր մեղավորները, իսկ նրանց կամակատարները բանտարկվեցին, հիմք են տալիս նորովի մոտենալու Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման հարցին:

Մինչև հիմա տիրապետող է այն տեսակետը, որ Թուրքիան չի ճանաչել Հայոց ցեղասպանությունը, և այդ հիման վրա պահանջվում է, որ նա ընդունի իր մեղքը: Մինչդեռ թուրքական դատարանի 1919–1920 թթ. որոշումը ոչ այլ ինչ է, քան Հայոց ցեղասպանության ճանաչում և դատապարտում թուրքական պաշտոնական իշխանությունների կողմից: Թուրքական դատարանը 1919–1920 թթ. դատավարության ժամանակ հանդես է եկել թուրքական պետության և նրա սուլթանի անունից ու իր վճիռն արձակել է հանուն Թուրքիայի և նրա սուլթանի: Այդ որոշումը չի բեկանվել թուրքական կառավարության կողմից: Դա չի բեկանվել նաև թուրքական պետության սյուզերենի՝ սուլթանի կողմից, որն օժտված էր նման լիազորություններով, և մինչև 1922 թ., երբ նա դատավճռի արձակումից հետո ևս երեք տարի նստած էր գահին, չի դիմել այդ քայլին: Ընդհակառակը, թուրքական բարձրագույն իշխանությունները և պետական մարմիններն ընդունել են դատավճռի օրինական լինելը ու իրականացրել նրա որոշումներն այն մասով, որը վերաբերում էր հարյուրից ավելի հանցագործների բանտարկությանը: Եվ այն հանգամանքը, որ հայերի ցեղասպանության գլխավոր ռճրագործներին հաջողվել էր դեռևս նախքան պատերազմի ավարտը փախչել Թուրքիայից, և որի պատճառով հնարավոր չէր ավելի մահվան դատավճռի իրականացումը, բնավ չի կարող ստվեր գցել այդ որոշման վրա, որի քաղաքական ասպեկտը Հայոց ցեղասպանության ճանաչումը և նրա կազմակերպիչներին պատժելն էր: Հակառակ պարագայում ինչի՞ համար էին Օսմանյան կայսրության մեծ վեզիրները, նախարարները, վալիները, կայմակալները և այլ պաշտոնյաներ, երիտթուրքական կուսակցության ողջ ղեկավարությունը և նրա տեղական կոմիտեների գործիչները, իսլամ հոգևոր առաջնորդները ռազմական արտակարգ ատյանի առջև կանգնում, դատապարտվում մահվան և բանտարկության:

Հարկ է ուշադրություն դարձնել ևս մի կարևոր հանգամանքի վրա: Այդ ժամանակ օրինական իշխանությունը պատկանում էր սուլթանին և նրա կողմից նշանակվող թուրքական կառավարությանը, իսկ քեմալականներն իրենցից սոսկ շարժում էին ներկայացնում և դեռևս չէին եկել իշխանության գլուխ: Եվ պատմագիտության, այդ թվում և հայ պատմագիտության կողմից անբացատրելի, եթե ոչ աններելի վրիպում պետք է համարել այն հանգամանքը, որ, անտեսելով թուրքական օրինական դատարանի օրինական որոշումը, նշվում է, թե Թուրքիան մինչ օրս չի ճանաչել Հայոց ցեղասպանությունը:

Այս տեսակետը պետք է վերանայվի: Կրկնում ենք, պաշտոնական Թուրքիան՝ ի դեմս նրա սուլթանի, կառավարության, դատարանի և վերջինիս կողմից ընդունված որոշումների, 1919 թ. արդեն մեկ անգամ ճանաչել է 1915 թ. Հայոց ցեղասպանությունը: Ուստի, այժմ խոսք կարող է լինել Թուրքիայի կառավարության կողմից

թուրքական օրինական դատարանի 1919 թ. ընդունած որոշումներն ընդունելու և Հայոց ցեղասպանության վերաճանաչման մասին:

Կարծում ենք, որ սա է ամենակարճ և վստահելի ուղին, որի շնորհիվ հնարավոր է «ջնջել հայերի կոտորածների և չարաշահումների հետևանքով օսմանցիների արժանապատվության վրա ընկած արյունոտ հետքերը և օսմանցիների ճակատը մրտաժ սև բծերը», որի մասին 1919 թ. դատավարության ժամանակ իր եզրափակիչ խոսքում շեշտեց Թուրքիայի գլխավոր դատախազ Մուսթաֆա Նազմի բեյը:

Կոստանդնուպոլսում 1919–1920 թթ. կայացած դատավարության և նրա արձանագրությունների ամբողջական հրատարակությունից, ինչպես նաև թուրքական դատարանի արդարացի որոշումներից հետո հողը գնում է ժամանակակից թուրք այն պատմաբանների ոտքի տակից, որոնք փորձում են դատարանի որոշումն իրականացնող հայ վրիժառուներին ներկայացնել որպես ահաբեկիչներ: Այս հարցում ևս իրավագիտական առումով անհրաժեշտ է նոր մտտեցում: Խոսքը հետևյալի մասին է: Երբ թուրքական դատարանը մահվան դատապարտեց Թալլաթին, Էնվերին, Ջեմալին, Նազմին, Շաքիրին, Ազմիին ու Նայիլին, ապա նրանք, ինչպես արդեն նշվել է, բացակայում էին և գտնվում էին արտասահմանյան տարբեր երկրներում՝ Գերմանիայում, Բուլղարիայում, Վրաստանում, Մալթայում և կամ Միջին Ասիայում: Ուստի հնարավոր չեղավ նրանց նկատմամբ թուրքական դատարանի մահվան վճիռն ի կատար ածել: Այդ հոգսն իրենց ուսերի վրա վերցրեցին հայ հայրենասեր վրիժառուները: Ստեղծվեց «Նեմեսիս» կազմակերպությունը, որը դարձավ գործի գլխավոր կազմակերպիչը: Անունը պատահական չէր ընդունվել, քանի որ Նեմեսիսը հին հունական դիցաբանության հատուցման աստվածուհին էր, որը պատժում էր ոճրագործությունների համար: Եվ հայ վրիժառուները մեկը մյուսի հետևից ի կատար ածեցին թուրքական դատարանի որոշումները: Այսպես, 1921 թ. մարտի 15-ին Բեռլինում Սողոմոն Թեհլերյանի գնդակից սպանվեց Օսմանյան կայսրության ներքին գործերի նախկին նախարար և մեծ վեզիր Թալլաթը (1916–1918 թթ.), դեկտեմբերի 6-ին Հռոմում Արշավիր Շիրակյանի ձեռքով սպանվեց մեծ վեզիրի պաշտոնը (1913–1916 թթ.) զբաղեցրած Մայիդ Հալիմ փաշան, 1922 թ. ապրիլի 7-ին, դարձյալ Բեռլինում՝ Արամ Երկանյանի և Արշավիր Շիրակյանի գնդակներից ընկան «Թեշքիլաթ-ը մահսուսեի» ղեկավար Բեհաեդդին Շաքիրը և Տրապիզոնի վալի Ազմի բեյը, իսկ հուլիսի 21-ին Թիֆլիսում սպանվեց ծովային նախարար Ջեմալը, ինչն իրականացրին Պետրոս Տեր-Պողոսյանը և Ստեփան Ծաղիկյանը: Իր արժանի պատիժը ստացավ նաև երիտթուրքական եռապետության մյուս անդամը՝ ռազմական նախարար Էնվերը, որին սպանեց Միջին Ասիայում կարմիր բանակի զորախմբի հրամանատար Հակոբ Մելքումովը:

Հետևաբար, այն հայորդիները, ովքեր վերացրին երիտթուրքական ոճրագործների բանդան, ոչ թե ահաբեկիչներ են, ինչպես ճգնում են «ապացուցել» թուրք որոշ լրագրողներ կամ պատմաբաններ, այլ արդարության հերոս մարտիկներ: Նրանց սխրանքի հետևանքով թուրքական Մեհմեդ VI Վահիդեդդին սուլթանի հրամանով ստեղծված թուրքական օրինական դատարանի որոշումներն ամբողջապես ի կատար ածվեցին:

Հուսով ենք, որ պատմագիտությունը հաշվի կառնի երիտթուրքերի նկատմամբ թուրքական դատարանի 1919–1920 թթ. ընդունած որոշումները, որոնք հիմք են հանդիսանում դրանց լույսի տակ քննարկել Հայոց ցեղասպանության ճանաչման հարցերը և նորովի մոտեցում ցուցաբերել մեզ համար հույժ կարևոր այդ հիմնախնդրի նկատմամբ: Կցանկանալինք այդ հանգամանքի վրա հրավիրել նաև Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի, արտաքին գործերի նախարարության ու կառավարական այլ մարմինների ուշադրությունը:

ВОПРОС ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН В СВЕТЕ ПРИГОВОРА СУДА НАД МЛАДОТУРКАМИ (1919–1920 гг.)

НИКОЛАЙ ОГАНЕСЯН

Р е з ю м е

После краха Османской империи новое турецкое правительство Ахмеда Тевфика паши в ноябре 1918 г. приняло решение о привлечении к судебной ответственности бывших младотурецких руководителей бывшей Османской империи. С этой целью 8 марта 1919 г. по приказу турецкого султана Мехмеда VI Вахиэддина были созданы военные трибуналы. Младотурецкие лидеры обвинялись в вовлечении Турции в Первую мировую войну без ведома и согласия турецкого высшего законодательного органа – меджлиса, и в организации массовой насильственной депортации и уничтожения армян на всей территории Османской империи. По приговору турецкого суда за совершенные преступления главные виновники и первые лица империи – Талаат, Энвер, Джемал, Назим, Шакир Бехаэддин, Азым и другие были приговорены к смертной казни, а сотни преступников рангом ниже – к различным годам тюремного заключения. Вердикт турецкого легитимного суда, созданного решением главы турецкого государства, легитимным султаном, делает необходимым по-новому подойти к вопросу о признании Турцией геноцида армян 1915 г. Решение суда не что иное, как признание геноцида армян официальными турецкими властями, с одной стороны, и осуждение руководителей Османского государства и главарей партии “Иттихад ве Теракки” за преступление, именуемое геноцидом армян, с другой стороны. Нельзя забывать, что турецкий суд во время процесса 1919–1920 гг. выступал от имени турецкого государства и его главы – султана, и свои решения принимал “Именем Турции и его султана Мехмеда VI Вахиэддина”. И эти решения никогда никем не были отменены. Следовательно, пора пересмотреть господствующую точку зрения о том, что Турция до сих пор не признала геноцид армян. Официальная Турция в лице своего султана, правительства и решением суда уже в 1919 г. признала геноцид армян. Сейчас речь может быть о принятии турецким правительством решения законного турецкого суда 1919 г. Решение турецкого суда о смертной казни главарей младотурецких палачей не было приведено в исполнение, так как они успели сбежать в различные зарубежные страны. Поэтому тяжесть этой миссии вынуждены были взять на себя армянские народные мстители, от рук которых пали Талаат, Энвер, Джемал, Шакир, Саид Халим и Азым. Исходя из этого, их нельзя считать террорис-

тами, как пытаются это делать турецкие историки. Они национальные герои, просто приведшие в исполнение решение турецкого суда.

ON RECOGNITION OF ARMENIAN GENOCIDE IN THE LIGHT OF THE COURT VERDICT
OVER THE YOUNG TURKS (1919–1920)

NIKOLAY HOVHANNISYAN

S u m m a r y

After the crush of the Ottoman Empire in October 1918, the new Turkish government headed by Ahmed Tevfik pasha took a decision in November 1918, to institute legal proceedings against the former Young Turks' leaders of the former Ottoman Empire. That decision was adopted by the head of the state - sultan Mehmed VI Vahieddin, who decreed to establish military tribunals on March 8, 1919. Those leaders were blamed for the involvement of the Ottoman Empire into the World War I without knowledge and the consent of the Turkish parliament and for organization of deportation and unihilation of the Armenians in the Ottoman Empire. The Turkish court recognized the Ottoman chief leaders Talaat, Enver, Jemal, Nazim, Shaqir and others guilty and sentenced them to death. Many others were condemned to imprisonment. In the light of that verdict of the Turkish court it is necessary to adopt a new approach to the question of recognition of the Armenian Genocide by Turkey in 1915. The Turkish court's verdict indeed means a recognition of the Armenian Genocide by the Turkish official powers, from one hand, and accusation of the government of the Ottoman Empire and the leaders of the Young Turks' party "Ittihad ve Terakki" for the crime, named Armenian Genocide, from the other hand. We cannot forget that the Turkish court accepted its decision and declared about it "On behalf of Turkey and its sultan Mehmed VI Vahieddin" , which later never had been officially repealed by any legislative power. Consequently, it is the time to revise the dominating point of view that Turkey hasn't recognized the Armenian Genocide up to now. Turkey officially, in the person of its sultan, its government and the Turkish court already recognized the Armenian Genocide in 1919. So now we can speak only about the recognition by the Turkish contemporary government of the verdict of the Turkish court in 1919. The decision of the Turkish military court about the death-sentences, unfortunately, had not been performed by the Turkish powers. The Young Turks' executioners succeeded to leave Turkey and thus to avoid punishment. So the burden of that mission were obliged to put upon their shoulders the Armenian people's revengers. They carried out the Turkish military tribunal's death-sentences regarding Talaat, Enver, Jemal, Said Halim, Azem, Shaqir Behaeddin. Taking into account all these facts of the case they must not be considered terrorists, as try many Turkish historians. They are national heroes who simply carried out the decision of the Turkish court.